յաններելի տանջանացն, եւ կամ ո՞րպէս գործեսցուք զլուսաւոր բարին»։ Ո՞վ է այս Սարգիս քահանան, արդեօք Գեղարդի վանականներից նոյնանուն մէկը, որ ուխտաւորական թուականներին գործակցել է Մխիթար Այրիվանեցուն նորա ճառընտրի գրութեան ժամանակ եւ 1298 թուին ստացել է մի Սաղմոսարան իւր եւ աշակերտներին յիշատակ, ինչպէս կը տեսնենք յետոյ։ Ցամենայն դէպս Սարգիսը կրօնաւոր էր և հեղինակը ծանօթ նորա մանկութեան և կեանքին։

Խրատները ընդհանուր կրօնական–բարոյական բնոյթ ունին, բայց երբեմն եւ կենցաղական. նախ սրում է զիտակցութիւնը եւ կամքը մարդկային բնութեան բացասական հակումների դէմ (Հռոմ. Է. գլխի իմաստով). ոչ միայն պէտք է ճանաչել չարն ու բարին, այլ կարողանալ բարին ընտրել։ Այս նախաբանից յետոյ մի մի նախադասութեամբ արդելք է դնում, ինչ որ պէտք չէ անել, որից մի քանի քաղուածք ենք բերում կենցաղական բնոյթ ունեցողներից։

Մի՛ տացես զարծաթ քո ի վարձու։
Մի՛ հարկանիցես զմարդ կամ զանասուն։
Մի՛ անողորմեսցիս ի վերայ զրաստուց։
Մի՛ լինիցիս զող ջրոյ և կամ հողոյ և կամ այլ իւիք իրաց։
Մի՛ կցեսցես տուն առ տուն կամ մերձեսցես սինոռ առ սինոռ։
Մի՛ երթիցես ի դիւթ և ի կախարդ և զարընգէց։
Մի՛ անցուսցես ի վերայ քո աւր՝ որ եթէ չկարդասցես զիրք։
Մի՛ խառնեսցես ջուր ի կաթն կամ ընդ զինի ի խաղ կամ ի վաճառ։
Մի՛ քակեսցես զցանդ հայրենի և կամ արհամարհեսցես զեղեալ կարգս և զկանոնս նախահարցն։
Մի՛ տացես թոյլ առնել ի վերայ մեռելին կած, և կապոյտ և կուր հերաց և օձիրս։
Մի՛ ճնասցեն առ քեզ վարձք վարձականաց և աշխատութիք. մշակաց։
Մի՛ ձգիցես առաջի մդ.կան խաւիս կամ խլինք կամ թուք։
Մի՛ լինիր կոշտ և կոպիտ, անհանճար և անիմաստ։

Այս ձեւով 150 խրատ տալուց յետոյ, աւելացնում է, «զոր եթէ առեալ ընդունիցիս զսա՝ և այլոց երկիւղածաց ուսուսցես՝ բարւոք արասցես»։

Մի առանձին գրութիւն էլ կայ նորա անունով. «Նորին Յովհաննու խրատ։ Բանք յաղագս ժամու պատարագին։ Պարտ և պատշաճ է մեզ»։ Բացատրում է երրորդ ժամի նշանակութիւնը և յորդորում այդ ժամը չմոռանալ, ուր և լինիս, այլ մտքով և աղօթքով ներկայ լինել պատարագին։ Ունի և յատուկ աղօթքներ գրած «Վասն երրդ. ժամու աւուրն»(*)։

Մատենագրական գործունէութեամբ շատ աւելի նշանաւոր է Մխիթար Այրիվանեցին. նորա ամէնից աւելի յայտնի գործը ժամանակագրութիւնն էր, որ հրատարակել են առանձին առանձին Մկրտիչ Էմին և Բերովբէ Պատկանեան ուսուցչապետները(**). ունի վկայաբանութիւններ, նրանցից կարևորը պատմական–մատենագրական արժէքով՝ Ստեփանոս Սիւնեցու վկայաբանութիւնն է, որ մենք ենք հրատարակել, նախ Երուսաղէմի Սիոնի մէջ և ապա առանձին տետրակով(***)։ Բազմաթիւ են նորա անունով մնացած գանձերը. բայց նորա մեղուաջան աշխատութեան պտուղը ճառընտիրն է, մեր գրչութեան արուեստի մէջ արտակարգ ճոխ բովանդակութեամբ։ Նորանն է վերջապէս Մաշտոցի մէջ մի յաւելում, ոչ ընդհանրացած և կանոնական դարձած, նորակերտ գրոց օրհնութիւնը, որին և յատուկ գանձ ունի նուիրած։ Ի նկատի ունենալով, որ Ստեփանոս Սիւնեցու վկայաբանութեան հրատարակութեան առթիւ յատուկ ուսումնասիրութեան ենք ենթարկել այդ գործը և մասամբ նորա միւս աշխատութիւնները՝ կենսագրական խնդիրների հետ, այստեղ մենք ամփոփ կ'անցնենք միայն։

Պատկեր 160.

Մխիթար Այրիվանեցու ծննդեան տարին մեզ յայտնի չէ, բայց կարող ենք մօտաւոր ժամանակը տալ։ Նորա ժամանակագրութիւնը պէտք է վերջացած լինէր Կոստանդին երկրորդ կաթուղիկոսի յիշատակութեամբ, որ գահընկէց եղաւ Հեթում Բ.ի կողմից 1289 թուին. նորանից յետոյ եղած կաթուղիկոսների անունները յաւելումն են յետագայ ժամանակի։ Բացի դորանից Մխիթարի նորագիւտ արձանագրու-

(*) Այս բոլոր քաղուածքներն առնուած են Ձեռ. № 2680. ԺԹ. ԾԴ — ԾԷ հատուածներից (262բ — 274), գրուած ընտիր գրչութեամբ Պիէ = 1378 թուին «ի գեղաքաղաքս, որ Անկեղակոյտ կոչի»։

(**) Առաջինը Մոսկուայում 1860 թուին, երկրորդը Պետերբուրգում։

(***) Մխիթար Այրիվանեցի, Նորագիւտ արձանագրութիւն և երկեր. Երուսաղէմ. 1931։